



Polish aid



Solidarity Fund PL



HELSINKI ASSOCIATION
for human rights

«ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ

Չ Ե Կ ՈՒ Յ Ց

ԴԱՏԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(2023 թ. ապրիլ - հունիս)

Երևան, 2023

Բովանդակության ցանկ

Գործադիր ամփոփագիր.....	3
Երախտիքի խոսք.....	4
Կազմակերպության մասին.....	6
Քաղաքական ֆոնը.....	7
Մարդու իրավունքերի և արդար դատաքննության համատեքստը.....	8
Դատական մշտադիտարկման բովանդակությունը.....	10
Ընդհանուր բացահայտված խնդիրներ.....	11
Առաջարկություններ.....	12
Ամփոփում.....	14

Գործադիր ամփոփագիր

2023 թվականի ապրիլի 1-ից հուլիսի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացվեց «*Ղեկի թափանցիկ դատական համակարգ և մարդու իրավունքների հարգանք. բազմապատկելով ազդեցությունը Սյունիքի մարզում*» ուսուցողական ծրագիրը, որում ընդգրկված էին ՀՀ մայրաքաղաք Երևանի, Սյունիքի (Կապան և Գորիս քաղաքներ), Շիրակի (քաղաք Գյումրի) և Լոռու (քաղաք Վանաձոր) մարզերի 125 երիտասարդներ:

Ծրագրի նպատակն էր դատական վարույթների նկատմամբ քաղաքացիական վերահսկողության միջոցով աջակցել դատաիրավական բարեփոխումներին և հասնել հետևյալ խնդիրների լուծմանը.

- ամրապնդել նախկինում ձեռք բերված դրական արդյունքները Երևանում, Շիրակի և Լոռու մարզերում դատական մշտադիտարկման, կարողությունների զարգացման և հանրային քննարկումների միջոցով,
- ապահովել հիմնարար իրավունքների, հատկապես արդար դատաքննության իրավունքի նկատմամբ հարգանքը,
- բարձրացնել երիտասարդների իրազեկությունը մարդու իրավունքների և դատարանների գործունեության վերաբերյալ,
- ընդլայնել ծրագրի արդյունքների աշխարհագրական ընդգրկումը՝ Սյունիքի մարզում ծրագրի փորձնական իրականացման միջոցով,
- խրախուսել համագործակցությունը քաղաքացիական հասարակության և դատական համակարգի միջև:

Մարդու իրավունքների և դատական մշտադիտարկման վերաբերյալ ուսուցողական դասընթացի արդյունքում ձևավորվել են մշտադիտարկողների հինգ խմբեր, որոնցում ընդգրկված 125 մասնակիցներից 108-ը հետագայում ներգրավվել են դատական մշտադիտարկման մեջ՝ իրականացնելով 499 քրեական գործերով 798 նիստերի դիտարկում վերոնշյալ քաղաքներում գործող թվով 5 առաջին աստյանի ընդհանուր իրավասության ընդհանուր դատարաններում:

Ծրագիրը հնարավորություն է տվել գնահատելու նաև մարդու իրավունքների ոլորտում ՀՀ-ի ստանձնած պարտավորությունների և ՀՀ օրենսդրության համապատասխանությունը՝ *դատական մշտադիտարկման պարզեցված ձևաթղթի* միջոցով: Երիտասարդ մշտադիտարկողները այն լրացնում էին դատական նիստերի ընթացքում՝ կազմելով ճշմարտությունն արտացոլող անաչառ և մանրամասն արձանագրություններ:

Սույն զեկույցը ներկայացնում է նշյալ գործունեության արդյունքում խմբերի գրանցած որոշ համակարգային խնդիրներ, առաջարկում լուծումներ: Ավելին, այն կարող է հիմք հանդիսանալ 2022-2023 թվականների դատական համակարգի տեղեկատվության հասանելիության համեմատական վերլուծության համար՝ հիմնվելով 2021-2022 թվականների գնահատումների վրա¹:

¹ Տե՛ս Հելսինկյան ասոցիացիա, Զեկույց դատական համակարգի գործունեության վերաբերյալ. տեղեկատվության հասանելիության համեմատական վերլուծություն. 2021-2022 թթ., հրատարակված 2022 թ.-ի հուլիսի 27-ին, <https://rb.gy/vxi2u> :

Ձեկույցի նպատակն է արտացոլել դատական մշտադիտարկման գործընթացում ներգրավված 14-ից 28 տարեկան երիտասարդների գնահատականները և կարծիքները, ինչպես նաև նրանց ձգտումը՝ ակտիվորեն մասնակցելու իրենց պետության և մասնավորապես արդարադատության համակարգի կայացմանը:

Այսպիսով, այն կազմվել է՝ հիմնվելով ծրագրին մասնակցած երիտասարդների ձեռք բերած տեղեկությունների և նրանց առաջարկների վրա:

Երախտիքի խոսք

Ծրագիրն իրականացվել է «Հելսինկյան ասոցիացիա» իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից², **Լեհաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության**³ աջակցությամբ և **Լեհաստանի Հանրապետության Համերաշխություն հիմնադրամի**⁴ հետ համագործակցությամբ:

Ձևավորված համագործակցության շրջանակներում **ՀՀ Դատական դեպարտամենտը**⁵ կազմակերպությանը շնորհել է պաշտոնական թույլտվություն, համաձայն որի՝ մասնակիցներին (հատկապես մինչև 16 տարեկան)⁶ հնարավորություն է տրվել ազատորեն մուտք գործելու դատական նիստերի դահլիճ՝ հրապարակային դատավարություններ դիտարկելու նպատակով: Այդ թույլտվությունը կարևոր նշանակություն ունեցավ ծրագրի հաջող իրականացման համար:

Մեր շնորհակալությունն ենք հայտնում նաև **ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը**⁷ և **Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոնին** (ԿԶՆԱԿ)⁸ աջակցության, մասնավորապես մարդու իրավունքների ուսուցողական դասընթացի թեմատիկ ծրագրի վերաբերյալ դրական փորձագիտական եզրակացության համար: Կարծիքն ընդգծում է, որ ծրագիրը կոչված է զարգացնելու ավագ դպրոցների սովորողների հետաքրքրությունները մարդու իրավունքների և արդար դատաքննության խնդիրների վերաբերյալ վերապատրաստման դասընթացի և դատական մշտադիտարկումների միջոցով, նաև նպատակ ունի նպաստելու մասնակիցների շրջանում քաղաքացիական ակտիվ դիրքորոշման ձևավորմանը: Բացի սրանից՝ կարծիքում առանձնակի կարևորվում է ԵԽ-ի հրատարակած *«Կողմնացույց» մարդու իրավունքների երիտասարդական կրթության ձեռնարկի* հայերեն տարբերակի գործածությունը, «որն իր տեղեկատվական ծավալով և մեթոդաբանական արդիականությամբ ոչ միայն կարող է նպաստել կազմակերպվող դասընթացի որակի ապահովմանը, այլև դառնալ մարդու իրավունքները դասավանդող ուսուցչի մշտական ուղեկիցը»: Նշենք, որ այս համապարփակ ռեսուրսն օգտագործում է դասավանդման ժամանակակից մեթոդներ, ըստ այդմ, կարող է նպաստել վերապատրաստման դասընթացների արդյունավետությանը: Ծրագիրը մասնակիցներին հնարավորություն ընձեռեց ուսուցման ինտերակտիվ մեթոդների միջոցով

² <https://hahr.am/>; <https://humanrightstv.am/>

³ <https://www.gov.pl/web/diplomacy>

⁴ <https://solidarityfund.pl/>

⁵ <https://www.spjur.am/en/companies/judicial-department-of-the-republic-of-armenia/71501>

⁶ 16 և բարձր տարիքի ՀՀ քաղաքացիները կարող են առանց որևէ խոչընդոտի մասնակցել դրնբաց դատավարություններին: Դատարան և նիստերի դահլիճ մուտք գործելու համար նրանք պետք է ներկայացնեն անձը հաստատող փաստաթուղթ:

⁷ <https://escs.am/en>

⁸ <https://kznakhimnadram.blogspot.com/>

ներգրավվելու կարևոր թեմաների քննարկումներում: Ավելին, դատական մշտադիտարկմանը մասնակցելը հնարավորություն է տալիս մասնակիցներին տարբեր առիթներով արտահայտելու իրենց տեսակետները մարդու իրավունքների առկա խնդիրների վերաբերյալ:

Առանձնապես կարևորում ենք մարդու իրավունքների և դատական մշտադիտարկման կարողությունների զարգացման հայեցակարգը ՀՀ Սյունիքի մարզ փոխադրելը: Այն համահունչ է Եվրոպական միության և բազմաթիվ կարևոր շահագրգիռ կառույցների կողմից իրականացվող **«Դիմակայուն Սյունիք թիմ Եվրոպա» համատեղ նախաձեռնության**⁹ առաջնահերթություններին, որի շրջանակում էլ իրականացվել է ծրագիրը:

Ծրագիրն ամփոփվեց վերոնշյալ քաղաքների ընդհանուր իրավասության դատարանների դատավորների հետ փորձի փոխանակման հանդիպումներով: Մեր շնորհակալությունն ենք հայտնում մասնակից դատավորներին, որոնք, չնայած խիստ ծանրաբեռնված աշխատանքային ժամանակացույցին, սիրով համաձայնեցին հանդիպել խմբերին, ներկայացրին իրենց փորձը, պատմեցին հետաքրքիր դեպքեր, պատասխանեցին արձանագրված խնդիրների շուրջ երիտասարդներին հուզող հարցերին: Հանդիպումներն իրականություն դարձան նաև դատարանների նախագահների աջակցությամբ: Նրանցից ոմանք անձամբ էին ներկա հանդիպումներին:

Նախաձեռնության շրջանակում կազմակերպությունը սերտորեն համագործակցել է ՀՀ Սյունիքի մարզպետարանի¹⁰ հետ՝ հատկապես ի դեմս Կրթության, մշակույթի և սպորտի վարչության, որի աջակցությունն ու մասնակցությունը ծրագրին անգնահատելի են:

Լեհաստանի Համերաշխություն հիմնադրամի աջակցությամբ և մասնակցությամբ հուլիս ամսին փորձի փոխանակման նպատակով կազմակերպության թիմը հանդիպեց **«Դատարանների հսկողություն Լեհաստան» հիմնադրամի** (Court Watch Poland)¹¹ ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում երկու կազմակերպությունները ներկայացրին իրենց գործունեության հիմնական ուղղություններն ու մշտադիտարկման մեթոդները, ինչն օգնեց գտնելու հետագա համագործակցության և համատեղ ծրագրերի ընդհանուր եզրեր: Հանդիպումը ներառում էր մարտահրավերների հաղթահարման, լուծումներ առաջարկելու և միմյանց ոգեշնչելու քննարկումներ:

Եվ վերջապես, մեր շնորհակալությունը երիտասարդ դատական մշտադիտարկողներին, որոնք ջանք ու եռանդ չխնայեցին և ակտիվորեն մասնակցեցին ծրագրին: Նրանց աշխատանքի արդյունքում է այս զեկույցն այսօր իրականություն դարձել:

Արդյունավետության բարձրացման համար հատկապես կարևորվեցին երիտասարդներին ուղղված նախաձեռնությունները, ծրագրի շրջանակների ընդլայնումը՝ այլ մարզերի ընդգրկմամբ: Առաջարկվեցին կիրառել դատական գործերի մշտադիտարկման, զեկույցների կազմման, առցանց դիտորդության, վերապատրաստման և համագործակցության համար նորարարական առցանց հարթակներ: Կարևորվեցին տարբեր մարզերի երիտասարդական խմբերի միջև փորձի փոխանակման հանդիպումները, առցանց ֆորումների ու համագործակցության միջավայրերի հարթակների ձևավորումը, քննարկվեցին մշտադիտարկման արդյունքները հավաքելու, վերլուծելու և ազդեցիկ

⁹ <https://eu4armenia.eu/team-europe-initiative/>

¹⁰ <http://syunik.mtad.am/structure/>

¹¹ <https://courtwatch.pl/en/>

զեկույցներ կազմելու մեթոդները սահմանափակ մարդկային և ֆինանսական ռեսուրսների պայմաններում:

Կազմակերպության մասին

«Հելսինկյան ասոցիացիա» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը¹² հիմնադրվել է 1997 թվականին, գրանցված է ՀՀ Արդարադատության նախարարությունում: Կազմակերպության սկզբնական նպատակն էր պահպանել 1975 թվականի Հելսինկյան համաձայնագրի սկզբունքները: Ժամանակի ընթացքում այն առավել ընդլայնեց իր առաքելությունը՝ ներգրավվելով մարդու իրավունքների խախտումների դեմ պայքարում և հիմնարար իրավունքների, մասնավորապես խոսքի, միավորման, խաղաղ հավաքների, արդար դատաքննության և այլ իրավունքների պաշտպանության մեջ:

Առաջնորդվելով բոլոր մարդկանց իրավունքները հարգող արդար Հայաստանի տեսլականով՝ կազմակերպությունը հետապնդում է հետևյալ հիմնական նպատակները.

- պետական կառույցներում թափանցիկության և հաշվետվողականության նպաստում մարդու իրավունքների հետևողական մշտադիտարկումների, հաշվետվությունների և որոշումների կայացման մեջ քաղաքացիական ներգրավվածության խրախուսման միջոցով,
- հայ հասարակության մեջ իրավական գիտակցության և ըմբռնման զարգացում կրթության և իրազեկման միջոցով,
- իրավական օգնության, ներառյալ ներկայացուցչության, խորհրդատվության և ռազմավարական դատավարության միջոցով խախտված իրավունքների և ազատությունների գործնական պաշտպանություն,
- մարդու իրավունքների միջազգային պարտավորություններին Հայաստանի հավատարմության ջատագովում, դրանց իրականացման վերահսկում և այլն:

Ծրագիրը խիստ համահունչ է հիշյալ նպատակներին և աջակցում է դրանց իրագործմանը: Փաստացի այն մեկնարկել է 2019 թվականից, երբ կազմակերպությունը Եվրասիա համագործակցություն հիմնադրամի (որպես ղեկավար կազմակերպություն) և գործընկեր «Իրավունքի ուժ» ՀԿ-ի հետ համատեղ իրականացրեց ԱՄՆ Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրոյի կողմից աջակցվող «Համագործակցություն հանուն արդարադատության ոլորտում բարեփոխումների» ծրագիրը (2019-2022 թթ.): Հիմնական նպատակներից մեկը երիտասարդների կարողությունների զարգացումն էր դատական մշտադիտարկման և բարեփոխումների առաջընթացի վերահսկողության ոլորտներում, որն իրականացվեց ՀՀ բոլոր մարզերում կարողությունների զարգացման դասընթացների շարքի և դատական մշտադիտարկման միջոցառումների միջոցով:

Արդյունքում դատական համակարգի, դրա խնդիրների և գործառույթների վերաբերյալ հասարակության գիտելիքները և իրազեկվածությունը նկատելիորեն աճեցին ուղեկցվելով իրավական փորձագիտության նկատմամբ մեծ հարգանքով: Այս զարգացումը հետագայում նպաստեց համակարգի ներսում առկա մարտահրավերների և խնդիրների գոյության ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ գործոնների ընկալմանը: Ավելին, ծրագիրը նպաստեց դատաիրավական բարեփոխումների ոլորտում կայուն համագործակցության զարգացմանը

¹² <https://hahr.am/>; <https://hrtv.am/>

կառավարության և քաղաքացիական հասարակության միջև, ինչպես նաև քաղաքացիական հասարակության իրավական բարեփոխումների մասնագետների նոր խմբի ձևավորմանը:

Ծրագրի հաջող իրականացումը ծնեց նոր գաղափարներ, որոնք իրականացվեցին Լեհաստանի Համերաշխության հիմնադրամի հետ հետագա համատեղ նախաձեռնություններում: Խոսքը «*Իրավական ռոբոտում վերապատրաստված երիտասարդ քաղաքացիները որպես անկախ և թափանցիկ դատական համակարգի երաշխավորներ*» (2021 թ.), «*Հայաստանում անկախ և թափանցիկ դատական համակարգ ունենալու ճանապարհին*» (2022 թ.) և «*Դեպի թափանցիկ դատական համակարգ և մարդու իրավունքների հարգանք. բազմապատկելով ազդեցությունը Մյունխի մարզում*» (2023 թ.) ուսուցողական ծրագրերի մասին է: Այս ջանքերին է նպաստում նաև «*Երիտասարդները հանուն հիմնարար իրավունքների ճանաչման և հարգանքի*» ուսուցողական ծրագիրը (2022-2023 թթ.):

Այս ծրագրերը միասին զգալիորեն նպաստեցին Հայաստանում մշտադիտարկման մշակույթի առավել լայն տարածմանն ու զարգացմանը՝ ծառայելով որպես հանրային վերահսկողության արժեքավոր և արդյունավետ գործիք:

Քաղաքական ֆոնը

Հայաստանի Հանրապետությունը հայտնվել է Լեռնային Ղարաբաղի չլուծված հակամարտությունից բխող քաղաքական լարվածության և անապահովության իրավիճակում:

Եվրոպայի խորհրդի հակակոռուպցիոն մարմինը՝ GRECO-ն, հրապարակել է Հայաստանի վերաբերյալ գնահատման չորրորդ փուլի երկրորդ միջանկյալ զեկույցը, որն անդրադառնում է կոռուպցիայի կանխարգելմանը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում: Զեկույցն ընդունվել է GRECO-ի 93-րդ լիագումար նիստի ժամանակ (2023 թ.-ի մարտի 20-24): Այն առաջարկում է մեծացնել օրենսդրական գործընթացի թափանցիկությունը՝ ապահովելով օրենքների նախագծերի հանրային քննարկումները, նախագծերի և փոփոխությունների ժամանակին հրապարակումը և հանձնաժողովների գործունեության բարեփոխումների հանրայնացումը¹³:

ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի (ԲԴԽ) որոշմամբ՝ մի շարք դատավորներ հեռացվել են դատական համակարգից տարբեր պատճառաբանություններով՝ էական կարգապահական խախտմամբ: Մի դեպքում հիմք է հանդիսացել արդարադատությանը խոչընդոտելու հողվածով դատավորի դեմ հարուցված քրեական գործը, մյուս դեպքում՝ դատական իշխանության վարկաբեկումը, դատարանի անկախության ու անաչառության վտանգվելը, դատական ակտերի՝ կասկածի տակ դրվելը:

Պաշտոնանկ արված դատավորները գանգատներ են ներկայացրել Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ): Եվրոպական դատարանը որոշել է առաջնահերթություն կիրառել լիագորությունները դադարեցված դատավորի գանգատները քննելու հարցով և դրանք քննել մեկ վարույթում:

¹³ <https://www.coe.int/en/web/greco/-/armenia-publication-of-the-second-interim-compliance-report-of-4th-evaluation-round>

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծով¹⁴ առաջարկվում է դատավորների կարգապահական հարցերով զբաղվող Բարձրագույն դատական խորհրդի չորս անդամից բաղկացած կազմ, այդ թվում՝ երկու անդամ՝ ընտրված դատավորների և մյուս երկուսը՝ Ազգային ժողովի կողմից: Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշման դեմ բերված բողոքի քննությունն իրականացնելու է Բարձրագույն դատական խորհուրդը՝ տվյալ կարգապահական վարույթով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության կազմում չընդգրկած անդամների կազմով: Բողոքարկման երկամսյա ժամկետը թույլ է տալիս չեղարկել, աշխատանքից հեռացնել, փոխել կարգապահական տույժերը կամ որոշումները թողնել անփոփոխ:

Հարկ է նաև նշել, որ դատավորների հաճախակի հեռացումներն ավելի են սրել դատարանների գերձանրաբեռնվածության հարցը և ոչ թե լուծել այն, քանի որ, ի թիվս այլ խնդիրների, նորանշանակ դատավորները հիմնականում ստիպված են գործերը վերսկսել սկզբից:

Մարդու իրավունքների և արդար դատաքննության համատեքստը

Մարդու իրավունքների հիմնարար սկզբունքներն ամրագրված են գերագույն օրենքով՝ ՀՀ Սահմանադրությամբ, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է¹⁵, մարդը բարձրագույն արժեք է, և վերջինիս անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է¹⁶: Այդ իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականությունն է, որը սահմանափակված է այս սկզբունքներով որպես անմիջականորեն գործող իրավունք¹⁷:

Ավելին, յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք, և, ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան, ունի իր իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունք¹⁸: Յուրաքանչյուր ոք ունի նաև անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք: Սահմանադրությունն անդրադառնում է ողջամիտ ժամկետներում արդար և հրապարակային դատաքննության իրավունքին, որն իրականացվում է անկախ և անաչառ դատարանի կողմից, նշելով, որ հատուկ հանգամանքներում և օրենքով սահմանված կարգով դատական վարույթները կամ դրանց հատվածները կարող են տեղի ունենալ փակ դռների հետևում. սա արվում է դատարանի որոշման հիման վրա՝ նպատակ ունենալով պաշտպանելու մասնակիցների գաղտնիությունը, անչափահասների շահերը, արդարադատության շահերը, ինչպես նաև պետական անվտանգությունը, հասարակական

¹⁴ ՀՀ սահմանադրական օրենքը «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, <https://www.e-draft.am/projects/4643/about>

¹⁵ ՀՀ Սահմանադրություն, հոդված 1, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510>

¹⁶ Նույն տեղում, հոդված 2:

¹⁷ Նույն տեղում, հոդված 3:

¹⁸ Նույն տեղում, հոդված 61:

կարգը կամ բարոյականությունը¹⁹:

ԱՄՆ Պետքարտուղարության Մարդու իրավունքների 2022 թվականի զեկույցն ընդգծում է, որ թեև Սահմանադրությամբ և օրենքներով սահմանվում է արդար և հրապարակային դատաքննության իրավունք, սակայն դատական համակարգը չի ապահովել այս իրավունքի իրացումը²⁰:

2021 թվականի մարտի 1-ից ուժի մեջ մտավ Եվրամիություն-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (CEPA): Այն այժմ վավերացվել է Հայաստանի Հանրապետության, ԵՄ անդամ բոլոր երկրների և Եվրախորհրդարանի կողմից: Համաձայնագիրը կարևոր հիմք է ԵՄ-Հայաստան հարաբերությունների համար: Այն ապահովում է միասին աշխատելու ինստիտուցիոնալ շրջանակը լայն ընդգրկում ունեցող ոլորտներում՝ ժողովրդավարություն, իրավունքի գերակայություն, մարդու իրավունքների ամրապնդում և օրենսդրության բարելավում:

2023 թվականի մայիսի ԵՄ-Հայաստան գործընկերության խորհրդի նիստը վերահաստատեց, որ ժողովրդավարությունը, լավ կառավարումը, օրենքի գերակայությունը, կոռուպցիայի դեմ պայքարը, մարդու իրավունքները և գենդերային հավասարությունը մնում են Արևելյան գործընկերության քաղաքականության հիմնաքարը: Մայիսին ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի և ՀՀ Արտաքին գործերի նախարարի միջև հայ-ամերիկյան ռազմավարական երկխոսությունը, ի թիվս այլոց, ներառում էր նաև մարդու իրավունքների ու արդարադատության ոլորտի բարեփոխումներին աջակցող ծրագրերի քննարկում²¹:

Արդար դատաքննության՝ որպես հիմնարար իրավունքի կարևորությունը պետք է դիտարկել որպես արդարադատության և անհատի իրավունքների պաշտպանության անկյունաքար: Դա ենթադրում է, որ դատական գործընթացներում յուրաքանչյուր ոք պետք է ունենա արդար և անաչառ դատաքննության իրավունք: Ըստ վիճակագրության՝ 2020 թվականին Հայաստանում 100 հազար բնակչին բաժին է ընկել 8 դատավոր, մինչդեռ Եվրոպայի խորհրդի երկրներում այս թիվը կրկնակի է: 2020 թվականին Երևանի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացվել շուրջ 37 հազար քաղաքացիական գործ, հաջորդ տարի այս թիվը կրկնապատկվել է: 2022 թ.-ի դեկտեմբերի դրությամբ գործերի թիվը հաստում է 65 հազարը, իսկ դրանք քննած կամ քննող դատավորների թիվն ընդամենը 35-ն է: Այսինքն՝ մեկ դատավորին միջինը բաժին է ընկնում շուրջ երկու հազար քաղաքացիական գործ, և դատավորի ծանրաբեռնվածությունը թույլատրելից ավել է երեք անգամ:

Վիճակագրության մեջ նշված իրավիճակը վերաբերում է նաև քրեական գործերին՝ մատնանշելով Հայաստանի իրավական համակարգում գործերի ծանրաբեռնվածության և, դրանով պայմանավորված, դատական համակարգի արդյունավետության ընդհանուր խնդիրը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահ Միոֆրա Օ'Լիրին այս տարվա սկզբին հրապարակել է դատարանի 2022 թվականի գործունեության մասին զեկույց՝ ներկայացնելով Եվրոպայի խորհրդի անդամ երկրներին, այդ թվում նաև Հայաստանին

¹⁹ ՀՀ Սահմանադրություն, հոդված 63:

²⁰ Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո, Մարդու իրավունքների 2022 թվականի զեկույց, Հայաստան, «Դատաքննություն» բաժին, հրապարակվել է 2023 թ.-ի մարտի 20-ին, <https://am.usembassy.gov/hy/25758/>:

²¹ Զիմական միջազգային դերակատարներ, Զամաշխարհային զեկույց 2023, Հյուսիսային ռայթս Ուոչ (Human Rights Watch), <https://www.hrw.org/world-report/2023/country-chapters/armenia>:

վերաբերող նախորդ տարվա վիճակագրությունը: Ըստ զեկույցի՝ Հայաստանում ավելի հաճախ խախտվել են անձի ազատության, անվտանգության և անմարդկային ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից պաշտպանված լինելու իրավունքները: Նախորդ տարի Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Հայաստանի դեմ քննած 31 դիմումների վերաբերյալ կայացրել է 21 վճիռ, փոխհատուցումների ընդհանուր գումարային արժեքը զեկույցում նշված չէ²²:

Դատական մշտադիտարկման բովանդակությունը

Դատական մշտադիտարկումը ծառայում էր երկակի նպատակի, որը ներառում էր ն՛ երիտասարդների մասնակցությունը, և՛ օրենքի կիրարկման ու մարդու հիմնարար իրավունքների, մասնավորապես արդար և հրապարակային դատաքննության իրավունքի գնահատումը: Անկախ իրավական համակարգերի փոփոխություններից՝ մարդու իրավունքների միջազգային շրջանակում համընդհանուր նորմերի պահպանումն էական է: Հայաստանը՝ որպես պետություն, պատասխանատու է արդար դատավարությունների և, ըստ անհրաժեշտության, նաև դրանց հանրային հասանելիության ապահովման համար:

Ծրագրի ընթացքում երիտասարդ դատական մշտադիտարկողները հնարավորություն ունեցան ականատես լինելու դատական գործընթացներին, ապացույցների ներկայացմանը, վկաների ցուցմունքներին, դատավճիռների հրապարակմանը և այլն:

Դատական մշտադիտարկումն ավելին է, քան միայն արդար դատաքննությունների պահպանման վերահսկողություն: Դատական գործընթացներին հետևելը մասնակիցներին օգնում է պատկերացում կազմելու, թե ինչպես է գործում համակարգն ընդհանրապես, իսկ կազմակերպությունն այն կիրառում է նաև որպես տեղեկատվության հավաքման միջոց, որն օգնում է գնահատելու արդարադատության համակարգի արդյունավետությունը և առաջարկելու ոլորտի բարելավման ուղղություններ՝ էմպիրիկ տվյալների հիման վրա: Այնուամենայնիվ, կարճաժամկետ ծրագրերը միշտ չէ, որ թույլ են տալիս հետևել դատական գործերի վարույթներին առաջին դատական նիստից մինչև դատավճռի հրապարակում, սակայն եթե որևէ գործ գրավում է մշտադիտարկողի հետաքրքրությունը, մենք ջատագովում ենք շարունակել մշտադիտարկումը նույնիսկ ծրագրերի պաշտոնական ավարտից հետո:

Կազմակերպությունն իրականացնում է երիտասարդների վերապատրաստումներ դատական մշտադիտարկման զանազան կարևոր ոլորտների վերաբերյալ հետևյալ հիմնական նպատակներով:

1. Էմպիրիկ (պրակտիկայի, փորձի և փաստերի դիտարկման վրա հիմնված) մշտադիտարկում

Դատավարությունները դիտարկվում են, որպեսզի հավաքվեն փաստեր ՀՀ արդարադատության համակարգի համապարփակ վերլուծության, բարեփոխումների ջանքերին աջակցելու և կոնկրետ գործերի կամ ընթացակարգերի վերաբերյալ մտահոգությունները բարձրաձայնելու նպատակով:

²² Հելսինկյան ասոցիացիա, Արդար դատաքննության իրավունքը՝ որպես մարդու հիմնարար իրավունք, հոդված, <https://rb.gy/vxi2u>:

2. Ինստիտուցիոնալ ձևաչափեր

Դատավարությունների մշտադիտարկումը ներառում է հետևյալ տարբեր ձևաչափերը.

- **արտահերթ (ad hoc) մշտադիտարկում**, որի նպատակն է սնեովել մեկ կոնկրետ գործի կամ դրա հարակից գործերի վրա,
- **թեմատիկ մշտադիտարկում**, որը կենտրոնանում է կոնկրետ դասի գործերի կամ դատական պրակտիկաների համընդհանուր հատկանիշների վրա,
- **համակարգային մշտադիտարկում**, որն ընդգրկում է ինչպես դատական նիստերի դահլիճի դիտարկումը, այնպես էլ արդարադատության ողջ համակարգի ավելի լայն գնահատումը:

3. Դատական մշտադիտարկման սկզբունքները

- **Անաչառություն:** Մշտադիտարկողները պետք է դրսևորեն անաչառություն և անկողմնակալություն:
- **Զմիջամտություն:** Մշտադիտարկողները չպետք է որևէ կերպ միջամտեն դատական գործերի վարույթներին:
- **Իրազեկ մշտադիտարկում:** Մշտադիտարկողները պետք է խորությամբ պատկերացնեն իրավական գործընթացները:
- **Կառուցողական ներգրավվածություն:** Պետության իշխանության հետ փոխգործակցությունը պետք է կառուցողական լինի:

4. Մշտադիտարկողների վարքը: Մշտադիտարկողները պետք է ցուցաբերեն անթերի պրոֆեսիոնալիզմ, խոհեմություն և փորձառություն: Անաչառության պահպանումն ու դրսևորումը կարևոր են: Խստորեն խորհուրդ է տրվում խուսափել ընթացիկ վարույթների վերաբերյալ հրապարակային մեկնաբանություններից:

5. Հաշվետվություն և առաջարկություններ: Դատական մշտադիտարկման վերաբերյալ հաշվետվությունը ռազմավարական կարևորություն ունի: Այն նպատակաուղղված է արդյունքների ներկայացմանը և բարեփոխումներին ուղղված առաջարկությունների մշակմանը: Այս մեխանիզմը շահագրգիռ կողմերի հետ երկխոսության հիմքն է և նպաստում է դատական համակարգի փոխակերպմանը:

Բացահայտված ընդհանուր խնդիրներ

Մշտադիտարկման խմբերը դիտարկել են մի շարք քրեական գործեր, որոնք ընդգրկում են զանազան կարևոր թեմաներ, այդ թվում՝ սպանություն, գողություն, թմրամիջոցների ձեռքբերում կամ վաճառք, ընտանեկան բռնություն, հարբած վիճակում կամ առանց վկայականի ավտոմեքենայի վարում, խախտումներ ՀՀ զինված ուժերում, քաղաքական ենթատեքստ ունեցող գործեր, քաղաքական գործչի նկատմամբ մահափորձ, թրաֆիկինգ և այլն: Գործերն ընտրելիս խստիվ հաշվի են առնվել գործերի թեմատիկ զգայունությունը և մասնակիցների տարիքային համապատասխանությունը:

Մշտադիտարկման գործընթացի ժամանակ դրանում ներգրավված երիտասարդներին խորապես տպավորել են իրենց դիտարկած նիստերը վարող դատավորների՝ հատկապես կին դատավորների պրոֆեսիոնալիզմը, նիստը վարելու փորձը և ձեռնհասությունը: Նրանք հիացած են դատավորների աշխատելաճով, վարքագծով և նույնիսկ դժվարին

իրավիճակներում իրավիճակը վերահսկելու կարողությամբ:

Այդ դատավորներից շատերը մանրակրկիտ հետևել են քրեական դատավարության օրենքի տառին, և նրանց դատական նիստերը նմանվել են օրինակելի դասի, որ կվարեր հմուտ և կայացած մանկավարժը: Այս մասին նշվել է նաև դատավորների հետ փորձի փոխանակման հանդիպումների ժամանակ:

Երևան, Գյումրի, Վանաձոր, Կապան և Գորիս քաղաքներում գտնվող առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարաններում իրականացված մշտադիտարկման արդյունքում բացահայտվել են տարբեր համակարգային խնդիրներ, որոնք ներկայացվում են ստորև՝ ընդհանրացված կերպով:

1. Դատական նիստերը մեկնարկել են ուշացմամբ:

2. Որոշ դեպքերում գործով կողմերը ներկա են եղել նիստերի դահլիճում, սակայն դատավորը դատական նիստերի դահլիճ է ներկայացել բավական ուշացմամբ:

3. Շատ դեպքերում նախագահող դատավորները ուշացման վերաբերյալ բացատրություն չեն տվել:

4. Դատավորները հաճախ չեն հայտարարել հաջորդ դատական նիստի օրն ու ժամը, ինչը կարող է հանգեցնել ժամանակացույցի անորոշությունների:

5. Չնայած փակ դատավարություններին, նիստերի դահլիճներում խոսակցությունները լսելի են եղել դահլիճից դուրս՝ միջանցքում:

6. Ապակե միջնորմով դատական նիստերի դահլիճում (Երևան քաղաքի Շենգավիթի նստավայր) դատավարությունների ընթացքում կողմերի ելույթները դժվար լսելի են եղել:

7. Ստացված տեղեկությունների համաձայն՝ ուղեկցող գումարտակի մեքենաներով ամբաստանյալներին տեղափոխելու ուշացումները հանգեցրել են նրան, որ լսումները հետաձգվել են, կամ ամբաստանյալներին ընդհանրապես չեն բերել դատարան, ինչը հանգեցրել է նոր հետաձգումների:

8. Արձանագրվել են «ԴատաԼեքս» տեղեկատվական համակարգում դատական գործերի վերաբերյալ հազվադեպ թարմացման դեպքեր կամ որոշ դեպքերում դրանց մասին տեղեկատվության իսպառ բացակայություն:

9. Ամեն անգամ պահանջվող «ԴատաԼեքս» տեղեկատվական համակարգի մուտքի կողի ներդրումը առաջացնում է որոշակի անհարմարություններ, դժվարություններ և պահանջում լրացուցիչ ժամանակ:

10. Արձանագրվել է դատական լսումների ընթացքում տեսաձայնագրությունների և այլ անհրաժեշտ ապացույցների հետազոտման համար համապատասխան տեխնիկական միջոցների բացակայություն:

11. Բացահայտվել են ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման դեպքեր:

12. Դատավճռի հրապարակման հայտարարված ժամը չի պահպանվել:

Առաջարկություններ

1. Ձեռնարկել միջոցներ՝ ապահովելու դատական նիստերի՝ նախատեսված ժամերին սկսելը:

2. Սահմանել դատավորների ճշտապահության հստակ կանոններ և վստահեցնել, որ նրանք պատասխանատվության կենթարկվեն անհիմն ուշացումների համար:

3. Ներդնել ուշացումների մասին պարտադիր ծանուցման և բոլոր համապատասխան

կողմերին բացատրություններ տալու համակարգ:

4. Կիրառել բոլոր կողմերին և մասնակիցներին առաջիկա դատական նիստի օրը և ժամը հայտնելու պարտադիր պահանջը, եթե օբյեկտիվ հանգամանքները չեն խանգարում հաջորդ նիստն այդ պահին նշանակելուն:

5. Վստահանալ, որ հաջորդ նիստի նշանակման մասին օրվա, ժամի և վայրի վերաբերյալ տեղեկատվությունը ճշգրիտ է և հստակորեն հաղորդակցվել է՝ հետագա անորոշությունները կանխելու համար:

6. Լուծել այն խնդիրները, որոնց պատճառով դատարանների դահլիճների խոսակցությունները լսելի են դառնում դրսում:

7. Ապահովել բոլոր կողմերի ելույթների լսելիությունն ապակե միջնորմով դատական նիստերի դահլիճներում:

8. Համագործակցել իրավապահ մարմինների հետ՝ դատական նիստերին մասնակցելու նպատակով ամբաստանյալներին տեղափոխելու հետաձգումները կամ խափանումները վերացնելու նպատակով:

9. Տեղափոխող գումարտակին հատկացնել լրացուցիչ միջոցներ, ներառյալ ֆինանսավորում՝ լրացուցիչ մեքենաներ ձեռք բերելու համար: Դրանք պետք է համապատասխանեն անվտանգության և տարողունակության չափանիշներին՝ փոխադրման կարիքներն արդյունավետորեն հոգալու համար, ինչպես նաև վարձել և վերապատրաստել լրացուցիչ աշխատակիցների, որոնք պատասխանատվություն կկրեն կալանավորներին առանց ուշացումների տեղափոխելու համար:

10. Մշակել պլանավորման պարզեցված համակարգ, որը կօպտիմալացնի կալանավորների տեղափոխման համար առկա ռեսուրսների օգտագործումը՝ նվազագույնի հասցնելով խնդիրները և առավելագույնի հասցնելով փոխադրումների արդյունավետությունը:

11. Ապահովել, որ դատարաններն իրականացնեն կանոնավոր թարմացումներ «ԴատաԼեքս» տեղեկատվական համակարգում:

12. Ապահովել «ԴատաԼեքս» տեղեկատվական համակարգի օգտագործողի համար առավել հարմարավետ մեթոդներ, հեշտացնել մուտքի գործընթացը՝ արդյունավետությունը բարելավելու և ժամանակի վատնումը նվազեցնելու համար:

13. Միջոցներ հատկացնել համապատասխան քանակի և որակի տեխնիկական սարքավորումների ձեռքբերման համար՝ լուսնների ընթացքում տեսաձայնագրությունների և այլ ապացույցների հետազոտումը հեշտացնելու նպատակով:

14. Ապահովել, որ սարքավորումները կանոնավոր կերպով թարմացվեն ինչպես տեխնիկական հնարավորությունների, այնպես էլ ծրագրային ապահովման առումով՝ ժամանակի ընթացքում դրա արդյունավետությունը պահպանելու համար:

15. Ապահովել, որ սարքավորումները ապացույցների համապարփակ ուսումնասիրության հնարավորություն տան նիստին ներկա բոլոր կողմերին:

16. Ընդլայնել համակարգային մեխանիզմները՝ պաշտպանելու բոլոր գործերով ողջամիտ ժամկետում քննության իրավունքը:

17. Կյանքի կոչել առավել գործուն ռազմավարություններ՝ դատական գործընթացների անհարկի ձգձգումները և հետաձգումները կանխելու նպատակով:

18. Խստորեն պահպանել դատավճիռների հրապարակման հայտարարված ժամանակը:

Այս առաջարկությունները ներկայացնելով պետությանը՝ շահագրգիռ կողմերը կարող են համագործակցել՝ լուծելու դատական մշտադիտարկման միջոցով բացահայտված համակարգային խնդիրները և ապահովելու ավելի արդյունավետ, թափանցիկ և հաշվետու դատական համակարգ:

Ամփոփում

Դատական մշտադիտարկման ծրագրին մասնակցությունը երիտասարդների համար բացահայտել է դատական համակարգի իրողությունները: Դատարանի՝ մեղադրյալների նկատմամբ կայացված վճիռները, այդ թվում՝ կողմնակալ կամ անարդար վերաբերմունքի դրսևորումները դիտարկելը նրանց մոտիվացրել է՝ հանդես գալու արդար և կայուն իրավական համակարգի գաղափարի պաշտպանությամբ:

Այս փորձառությունն ավելի է խորացրել դատական մշտադիտարկման, քաղաքացիների իրավունքների և արդար դատաքննության իրավունքի կարևորության նրանց ըմբռնումը: Առավել լավ տեղեկացված լինելով՝ նրանք կարող են իրենք իրենց իսկ պաշտպանել իրավունքների հնարավոր խախտումներից: Այս անմիջական փորձառությունն ընդգծում է թափանցիկության, հաշվետվողականության և մարդու իրավունքների պաշտպանության գործում նրանց՝ որպես ներգրավված և ակտիվ քաղաքացիների դերը: Երիտասարդ դատավորների, դատախազների և փաստաբանների պրոֆեսիոնալիզմը ոգեշնչել է մասնակիցներից շատերին վերանայելու ապագա մասնագիտության ընտրությունը:

Դատական մշտադիտարկումը մանրակրկիտ գնահատում է դատական համակարգի արդյունավետությունը՝ բացահայտելով խոչընդոտները և արձանագրելով արդյունքները, ինչպես նաև վեր հանում մարդու իրավունքների պաշտպանության, թափանցիկության, արդարության և լավագույն չափանիշներին հավատարիմ մնալու խնդիրները:

Նմանօրինակ ծրագրերը նպաստում են դատավորների, դատախազների և փաստաբանների նորարարական մտածողության և մոտեցումների ձևավորմանը՝ ստիպելով հրաժարվել հնացած կարծրատիպերից և ընդունել նոր հայեցակարգեր:

Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունը ընդգծում է անկախ, արդյունավետ և կոռուպցիայից զերծ դատական համակարգի կարևորությունը՝ արձագանքելով 2018 թվականից ի վեր ՀՀ-ում տեղի ունեցած քաղաքական փոփոխություններին: Այս առաջնահերթությունը հնչում է Կառավարության ծրագրերում՝ ընդգծելով արդարադատության հավասար հասանելիության քաղաքական վճռականությունը: Արդյունավետ դատական համակարգն արդարության և հավասարության անբաժանելի մասն է:

Հիմնվելով 2019-2023 թթ.-ի ծրագրի վրա՝ 2022-2026 թթ.-ի բարեփոխումների ռազմավարություն²³ ներառում է 14 նպատակ, որոնցից կառանձնացնենք հետևյալները.

- անցումային արդարադատության գործիքակազմի կիրառում փաստահավաք գործունեության միջոցով մարդու իրավունքների խախտումների բացահայտմամբ

²³ Հայաստանի Հանրապետության Կառավարություն, 2022 թվականի հուլիսի 21-ի N 1133-Լ որոշում Հայաստանի Հանրապետության Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=166582>:

(նպատակ 2),

- դատական համակարգի բարեփոխումների շարունակական ապահովում (նպատակ 4),
- քրեաիրավական ոլորտի բարեփոխումներ (նպատակ 5),
- իրավաբանական օգնության ոլորտի բարեփոխումներ (նպատակ 10):

Այս նպատակներն ընդգծում են մարդու իրավունքների ամրապնդմանը, դատական համակարգի հզորացմանը և իրավական պրակտիկայի կատարելագործմանն ուղղված համապարփակ ջանքերը:

Ծրագրային արդյունքները ձևավորում են կազմակերպության ապագա նախաձեռնությունները: Բարեփոխումների ռազմավարության իրականացման ակտիվ վերահսկումը ցույց է տալիս ՀԿ-ի նվիրվածությունը, ինչը կենսական նշանակություն ունի բարեփոխումների հաջող արդյունքների համար: Այս շարունակական զգոնությունը երաշխավորում է թափանցիկության ու հաշվետվողականության խթանման ճանապարհին մնալը:

Կազմակերպությունն օգտագործում է դատական մշտադիտարկման գործիքակազմը դատաիրավական բարեփոխումների ռազմավարությունների արդյունավետությունը դիտարկելու և գնահատելու համար՝ դրանով աջակցելով արդարադատության համակարգին, որտեղ դեռևս արձանագրվում են մարդու իրավունքների անգամ կոպտագույն խախտումներ: Այս դինամիկ բաղադրիչը բարեփոխումների իրականացմանը հետևելու արդյունավետ միջոց է, որ նպաստում է մարդու իրավունքների պաշտպանությանը դատական համակարգում: Այս ջանքերը հնարավորություն են տալիս գնահատելու առաջընթացը, ապահովելու նպատակների իրագործումը և նպաստելու Հայաստանի Հանրապետությունում ավելի արդար իրավական միջավայրի առկայությանը:

Հավելենք, որ արդարադատության համակարգի հետ հաջող համագործակցությունը ամուր հիմք է ստեղծում ապագա նախաձեռնությունների համար՝ հատկապես մեծացնելով դեպի ՀՀ մարզեր ընդլայնվելու ներուժը: Քաղված դասերը կխթանեն նմանօրինակ ջանքերը տարբեր ոլորտներում: Հիմնվելով ձեռք բերված գիտելիքների և գործընկերության վրա՝ հաջողված բաղադրիչների կրկնօրինակումը (piloting) կարող է լուծել մարզերի առանձնահատուկ կարիքները: Համատեղ ջանքերը կնպաստեն մարդու իրավունքների պաշտպանությանը, ժողովրդավարության ամրապնդմանը և արդարադատության զարգացմանը ՀՀ բոլոր մարզերում:





Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra



Polish aid



Solidarity Fund PL



HELSINKI ASSOCIATION
for human rights

HELSINKI ASSOCIATION HUMAN RIGHTS PROTECTION

REPORT

ON COURT MONITORING YOUTH PROGRAM

(April – July, 2023)

Yerevan 2023

Table of Contents

Executive Summary.....	18
